ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/2755/02/24 ք. Երևան
25 Ապրիլի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Գայանե Մազմանյանի, ծանոթանալով «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերության ընդդեմ «ՀՀ Ներքին գործերի նախարարություն» , «ՀՀ Ֆինանսների նախարարություն» ՝ Հիմք ընդունելով վերը նշված փաստերը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթներով՝ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ճանաչել 2024 թվականի հունվարի 26-ից մինչև 2024 թվականի մարտի 18-ը ՀՀ ՆԳ նախարարության և «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերության միջև գնման գործընթացի կասեցման իրավահարաբերության առկայությունը և որպես հետևանք պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը հանել «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերությանը Գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից: պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«Լոկատոր» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Դ.Դավթյանը 10.04.2024թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանողներ ՀՀ ներքին գործերի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության՝ 26.01.2024թ. մինչև 18.03.2024թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳ նախարարության և «Լոկատոր» ՓԲ ընկերության միջև գնման գործընթացի կասեցման իրավահարաբերության առկայությունը ճանաչելու և որպես հետևանք՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը «Լոկատոր» ՓԲ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից հանել պարտավորեցնելու պահանջների մասին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 11.04.2024թ.:
Դատարանի՝ 16.04.2024թ. որոշմամբ հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, վերադարձվել է:
«Լոկատոր» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Դ.Դավթյանը, հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացնելուց հետո, 22.04.2024թ. հայցադիմումը ներկայացրել է կրկին:
Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 22.04.2024թ.:
Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, գտնում եմ, որ հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գործը նախապատրաստել դատաքննության:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝ դատարանը.

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ:
Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ 24.05.2024 թվականին:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Գայանե Մազմանյան

Digitally signed by MAZMANYAN GAYANE 6205680386
Date: 2024.04.25 12:40:58 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am